ՍԱ-8581.

Ռ. Ռ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Ցարական Ռուսաստանը ժողովրդական տնտեսության հիմնական ցուցանիշներով, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, զգալի չափով ետ էր մնում առաջավոր կապիտալիստական երկրներից։ Ավելին. իմպերիալիզմի դարաշրջանում նա կանգնեց առաջավոր կապիտալիստական երկրների գաղութը դառնալու վտանգի առաջ։ Բայց այս նույն հետամնաց Ռուսաստանը միաժամանակ գաղութատեր պետություն էր։

Ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող ազգային ծայրամասերը նրա կողմից ենթարկվում էին ազգային-գաղութային բիրտ շահագործման։ Ցարիզմի վարած գաղութային քաղաքականության շնորհիվ երկրի ազգային ծայրամասերի, այդ թվում և Հայաստանի ժողովրդական տնտեսությունը գտնվում էր ծայրահեղ հետամնաց վիճակում։

Ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը գտնվում էր զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա։ Պրիմիտիվ էր հողամշակման տեխնիկան։ Ոռոգման ցանցը խիստ սակավ էր, որը Հայաստանի նման երկրի պայմաններում, ինքնըստինքյան, նշանակում էր գյուղատնտեսության հետամնացություն։ Բավականաչափ հողատարածություններ խոպան էին ու անմշակ։

1913 թ. Հայաստանում ցանքատարածությունները կազմում էին 345,5 հազար հեկտար, այդ թվում հացահատիկային կուլտուրաներին հատկացված էր 308,5 հազար, իսկ տեխնիկական կուլտուրաներին՝ 20,5 հազար[1]։ Հողի պարարտացումը հազվագյուտ էր։ Բնականաբար, այդ ամենը չէր կարող չանդրադառնալ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության վրա։ Այսպես՝ նախապատերազմյան տարիներին բերքատվությունը մեկ հեկտարից միջին հաշվով կազմում էր. հացահատիկ՝ 5,8 ցենտներ, բամբակ՝ 8,8 ցենտներ, խաղող՝ 75 ցենտներ և այլն[2]։ Սակավ և պրիմիտիվ էր գյուղատնտեսական տեխնիկան։ 1913 թ. Հայաստանում հաշվվում էր ընդամենը 17585 գութան և 99887 արոր[3]։

Առաջին համաշխարհային պատերազմը տնտեսական փլուզում առաջացրեց ինչպես պատերազմող բոլոր երկրներում, նույնպես և ցարական Ռուսաստանում, այդ թվում նրա գաղութը հանդիսացող Հայաստանում, որի տերիտորիայի մի մասը ռազմական գործողությունների վայր էր։ Պատերազմը ամենաբացասական հետևանքներ թողեց Հայաստանի և հայ ժողովրդի վրա։ Մեծ էին մարդկային կորուստները, ժողովրդական տնտեսությունը ծայրահեղ անկման էր հասել։

1 «Восстановление народного хозяйства Арм. ССР», стр. VI.
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։

Դրությունն ավելի վատթարացավ դաշնակների կարճատև տիրապետության օրոք։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանն անընդհատ մղվող սրստերազմների ռազմաբեմ էր։ Երկիրն ավերվում էր, շինարարական շատ թե քիչ լուրջ ոչ մի ձեռնարկում չկատարվեց։ Ավելին, եղածն էլ ավերվեց։ Իմպերիալիստները, մասնավորապես թուրք զավթիչները անարգել կողոպտեցին հայ ժողովրդին, հափշտակելով նրա նյութական հարստությունները, ֆիզիկական վերջնական կործանման եզրին կանգնեցնելով նրան։ Դաշնակների տիրապետության շրջանում խիստ կրճատվեցին ցանքատարածությունները։ 1913 թ. 345,7 հազար հեկտարի դիմաց 1919 թ. դրանք կազմեցին 82,7 հազար հեկտար[4]։ Ոռոգման սիստեմը ամբողջությամբ շարքից դուրս եկավ։ Հազարավոր հեկտար ցանքատարածություններ խոպան դարձան։ Խիստ պակասեց գյուղատնտեսական գործիքների թիվը։ 1919 թ. երկրում մնացել էր ընդամենը 5293 գութան և 22314 արոր[5]։ Զգացվում էր սերմացուի խիստ կարիք։

Ծայրահեղ անկման վիճակում էր անասնապահությունը։ Եթե 1913 թ. Հայաստանում կար 893 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ապա 1919 թ. այդ թիվը իջավ 294 հազարի։ Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը համապատասխանաբար 15646 հազարից իջավ 470,9 հազարի։

Հացահատիկային կուլտուրաների ընդհանուր արտադրանքը 1913 թ. կազմում էր 1779,0 հազար ցենտներ, իսկ 1919 թ. նվազելով հասավ 383,7 հազար ցենտների[6]։ Համապատասխանաբար նվազել էր բամբակի, կարտոֆիլի, խաղողի, բնական խոտի արտադրանքը։

Գյուղատնտեսական կուլտուրաների արտադրանքի նմանօրինակ անկումը բացատրվում էր ոչ միայն ցանքատարածությունների կրճատմամբ, այլև բերքատվության նվազմամբ։ Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը 1919 թ. իջավ 4,9 ցենտների, բամբակինը՝ 5,6 ցենտների, խաղողինը՝ 32,8 ցենտների[7]։

Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքային արտահայտությունը 1913 թ. 65,8 միլիոն ռուբլուց 1919 թ. իջավ 11,3 միլիոն ռուբլու (1926—27 թթ. անփոփոխ գներով)[8]։

Այսպիսին էր Հայաստանի գյուղատնտեսության ոչ լրիվ համայնապատկերը, երբ հաստատվեցին սովետական կարգեր։ Գյուղատնտեսությունն այդ վիճակից հանելու համար պահանջվում էր մեծ ջանքեր։ Եվ ժողովուրդը չխնայեց այդ ջանքերը։

Քաղաքացիական կռիվների ավարտից հետո հայ ժողովուրդը ստացավ խաղաղ շինարարական աշխատանքի անցնելու ռեալ հնարավորություն։

Խաղաղ շինարարության անցման դժվարին պայմաններում, երբ կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը աշխատավոր ժողովրդի ջանքերն ու բոլոր ուժերն ուղղեցին երկրի ժողովրդական տնտեսության վերականգնմանը, կուսակցությունը պատասխանատու և պատվավոր խնդիրներ դրեց նաև կոմերիտմիության առաջ։ Օգտագործելով ՌԿԵՄ փորձը, Հայաստանի կոմերիտմիությունը կուսակցության ղեկավարությամբ մոբիլի-

4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։
6 «Соц. строительство Арм. ССР (1920—1940)», стр. 70.
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում։

զացրեց հանրապետության բանվորա-գյուղացիական երիտասարդության ուժերը արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնման համար։ Կոմերիտմիությունը ուժեղացրեց իր մասնակցությունը պետական և տնտեսական շինարարության մեջ, բարձրացրեց իր անդամների ակտիվությունը և նախաձեռնությունը նոր հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։

Մեծ ու պատասխանատու խնդիրներ դրվեցին գյուղական կոմերիտական կազմակերպությունների առաջ։ Նրանց առաջ հրատապ կերպով ծառացավ գյուղական երիտասարդությանը գյուղատնտեսության վերականգնման համար պայքարի հանելը։ Հանրապետության կոմունիստների ու կոմերիտականների համար հատկապես կարևոր էր հայ գյուղի դարավոր տեխնիկական և կուլտուրական հետամնացության վերացումը։ Դրա համար անհրաժեշտ էր պայքարել հետամնաց տրամադրությունների դեմ, ներդնել գյուղատնտեսության մեջ ագրոտեխնիկական գիտության նվաճումները և հանդես բերել նախաձեռնություն։

Կոմերիտականները կազմակերպում էին ընկերություններ (այն ժամանակ կոչվում էին կոմունաներ), կոլեկտիվ կերպով վարում էին հողը, վերանորոգում գյուղատնտեսական ինվենտարը, օգնում չքավորներին և կարմիրբանակայինների ընտանիքներին դաշտային աշխատանքների ժամանակ։

1923 թ. գարնանը Ադրբեջանի սահմաններից Հայաստանի հարավ-արևելյան շրջանների վրա արշավեց մորեխը։ Դա, իրոք, արշավանք էր բառիս լայն իմաստով։ Մորեխի մեծ երամները իջնում էին դաշտերի, այգիների վրա և շատ չանցած նորածիլ դաշտերից և նորաբողբոջ այգիներից ոչինչ չէր մնում։ Մորեխը խորշակից ու երաշտից էլ վտանգավոր էր։ Վտանգը սպառնում էր հատկապես Զանգեզուրի գավառին։

Սովետական Հայաստանի կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը ձեռք առան բոլոր միջոցները մորեխի դեմ պայքարելու համար։ Կազմակերպվեց մորեխի դեմ պայքարող հատուկ հանձնաժողով, բաց թողնվեցին խոշոր դրամական միջոցներ։ Ապրիլ ամսից սկսած մորեխի դեմ մղվեց կազմակերպված պայքար քիմիական և այլ միջոցներով, որը հաջող արդյունքներ տվեց։ Զանգեզուրի գավառի գյուղացիությունը մեկ մարդու նման մասնակցում էր մորեխի դեմ մղվող պայքարին։ Համաժողովրդական այդ գործին ակտիվորեն մասնակցեցին նաև կոմերիտականները։ Սրանք պայքարի հանեցին նաև արտամիութենական երիտասարդներին և գյուղացիական լայն զանգվածներին։ Գյուղացիների մի մասի մոտ դեռևս իշխում էր սնոտիապաշտական գաղափարներ, որ դա «վերուց», աստծու կողմից ուղարկված չարիք է և, որ իրենք ոչինչ չեն կարող անել նրա դեմ։ Կոմերիտականները ագիտացիա էին մղում այդպիսի գաղափարների դեմ, բացատրում գյուղացիներին, որ այդտեղ ոչ մի գերբնական ուժի գործունեություն չկա և աստիճանաբար նրանց վերափոխում էին դեպի բնական երևույթները։ Համաժողովրդական ջանքերի շնորհիվ մորեխը պարտվեց։

Գյուղատնտեսության վերականգնման գործում լավ էին աշխատում էջմիածնի գավառի կոմերիտականները։ 1923 թ. հուլիսին ՀԿԵՄ էջմիածնի գավկոմի որոշմամբ գավառում անցկացվեց գյուղական կոմերիտական բջիջների մրցանակաբաշխություն։ Մրցանակաբաշխության պայմանները բավական խիստ էին։ Մրցանակի կարող էին արժանանալ միայն այն բջիջները, որոնք ակտիվորեն կմասնակցեին գյուղատնտեսական աշխատանքներին, միասնական գյուղատնտեսական հարկի գանձմանը, առուների, ճանապարհների շինարա-

բության աշխատանքներին, լայն աջակցություն ցույց կտային գյուղական խորհուրդներին, ամենուր կապ կստեղծեին կուսակցական բջիջների և գյուղական խորհուրդների հետ, կունենային կարգապահություն և կուռ կպահեին բջիջը[9]։ Մրցանակը ամենայն իրավամբ ստացավ Օշականի մանկատների կոմերիտական բջիջը։

Լավ էին աշխատում նաև Աշտարակի 1-ին և 2-րդ, Ուզունլարի կոմերիտական բջիջները։ Ամենուր կոմերիտականները օգնում էին գյուղացիներին ոռոգելու գաշտերն ու այգիները, որը ոգևորում էր արտամիութենական երիտասարդությանը։ Բերենք մի երկու օրինակ. 1924 թ. ամռանը անձրևների հետևանքով քանգված չքավոր գյուղացու տունը վերաշինեցին Կյորու գյուղի կոմերիտականները[10]։ Նույն թվականին Զեյվա գյուղի 28 կոմերիտականներ և արտամիութենական երիտասարդներ հնձեցին չքավոր գյուղացիների արտերը[11]։

Նման օրինակները բազմաթիվ են։

Կոմերիտականները ակտիվորեն պայքարում էին գյուղի մաքրության, նրա սանիտարական վիճակը բարվոք հիմքերի վրա դնելու համար։ 1925 թ. Դիլիջանի գավառի Սևքար գյուղի կուսակցական բջիջի նախաձեռնությամբ գյուղում կառուցվեց բաղնիք, որին ակտիվորեն մասնակցեցին կոմերիտականները[12]։ Գյուղի սանիտարական վիճակը ամենամեծ գրավականն էր տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարում։ Հայաստանի որոշ վայրերում 1920-ական թվականներին գոյություն ունեին բավական ընդարձակ ճահիճներ, որոնք տարափոխիկ հիվանդությունների բներ էին։ Սովետական Հայաստանի կառավարությունը հատուկ միջոցներ է հատկացնում ճահիճները չորացնելու համար։ Ճահիճների դեմ պայքարը համաժողովրդական բնույթ էր կրում։ Հայաստանի կոմերիտմիությունը անմասն չմնաց նաև այդ գործում։ Բերենք մի օրինակ։

Զեյվա գյուղի կոմերիտական բջիջը 1924 թ. իր հերթական ժողովներից մեկում որոշեց անդամների ուժերով չորացնել գյուղի շրջակայքի ճահիճները և դրանով իսկ վերջ դնել գյուղում տարածված մալարիա հիվանդությանը։ Գյուղխորհրդի տրամադրած փոխադրական միջոցներով կոմերիտականները չորացրին ճահիճները[13]։

Գյուղական շրջանների կոմերիտականներն ու երիտասարդները ակտիվորեն աշխատում էին գյուղխորհուրդներում, հողային կոմիտեներում, փոխօգնություններում, լուսավորության և առողջապահության բնագավառներում։

Երկրի գյուղատնտեսությունը արագ կերպով վերականգնելու համար կոմերիտական սկզբնական կազմակերպությունները, իսկ հաճախ էլ ամբողջ գավառային կազմակերպություններ մրցումներ էին կազմակերպում[14]։

Շնորհիվ կատարած լավագույն աշխատանքի, կոմերիտականների հեղինակությունը գյուղացիության շրջանում անընդհատ աճում էր։ Դրա լավագույն ապացույցը հետևյալ հաղորդումն է, որ մեջ ենք բերում ամբողջությամբ։

---

9 «Ավանգարդ», № 14, 22 օգոստոսի 1923 թ.։
10 «Երիտասարդ ռանչպար», № 20, 1925 թ.։
11 Նույն տեղում։
12 «Ավանգարդ», № 42 (71), 30 սեպտեմբերի 1925 թ.։
13 «Ավանգարդ», № 41 (40), 1924 թ.։
14 ՄԼԻ-ի ՀՊԱ, ֆ. 48, պ/մ 81, թ. 37։

«ԳՈՎԵԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՆ

Մինչև օրս մեր Դահարլի գյուղում տեսնված չէր, որ այսպիսի եռանդոտ աշխատանք տարվեր, չքավորների տների հոգսը քաշվեր և օգնություն ցույց տրվեր նրանց, ինչպես այսօր է։ Մեր գյուղի երիտասարդներն արթնացել են և գիտակցության եկել։ Ժողովներ են անում, մտածում են գյուղի մաքրության, լուսավորության մասին։ Չքավոր տները ցանքսից զուրկ են մնում եզ չունենալու պատճառով. դրա համար նրանք դիմել են գյուղի խորհրդի նախագահին և պահանջել անպայման հարուստներից եզ ու արոր տալ, որ չքավորների արտերը վարեն։ Կտրուկ միջոցներ ձեռք առնելով, բավարարել են չքավորներին, վարել են նրանց արտերը։ Երիտասարդները կազմել են շաբաթօրյակ և մաքրել գյուղի փողոցներն ու անմաքուր տեղերը։

Մեր երիտասարդների մեջ նոր կյանք է եռում և նրանք նայում են դեպի լույս, դեպի կոմունան։

Դիտող գյուղացի»[15]։

Վ. Ի. Լենինը նոր տնտեսական քաղաքականության անցնելու կապակցությամբ մեծ նշանակություն էր տալիս գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը կազմակերպելու և ընդարձակելու գործին, որն առաջին հերթին պետք է կատարվեր պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման միջոցով։ Նա նշում էր, որ սովետական պետությունը ամեն կերպ պետք է խրախուսի մանր հողագործի նախաձեռնությունն ու ձեռներեցությունը, նրա տնտեսության համար ստեղծի նպաստավոր պայմաններ[16]։

Առաջնորդվելով լենինյան ցուցումներով և ՌԿ(ր)Կ ծրագրային դրույթներով, Սովետական Ռուսաստանի փորձի հիման վրա Հայաստանում զգալի աշխատանքներ կատարվեցին սպառողական կոոպերացիայի կազմակերպման և նրա գործունեության ծավալման ուղղությամբ։ 1920 թ. դեկտեմբերին ստեղծվեց Հայկոոպը՝ Հայաստանի սպառողական կոոպերատիվների միությունը, որը խոշոր դեր կատարեց գյուղի և քաղաքի միջև ապրանքաշրջանառության ծավալման գործում։ Հայկոոպն ուներ նաև արտադրական որոշ ձեռնարկություններ ու արհեստանոցներ։

Կոոպերացիան վերականգնման տարիներին խոշոր հաջողությունների հասավ և զգալի դեր կատարեց ժողովրդական տնտեսության վերականգնման և մասնավորապես գյուղական բնակչության դրության բարելավման գործում։ 1921 թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի կառավարության որոշմամբ ստեղծվեց միասնական կոոպերացիա, որի մեջ ընդգրկվեց և գյուղկոոպերացիան։ Միասնական կոոպերացիային պետությունը տվեց զգալի արտոնություններ։ Սակայն մինչև 1924 թ. Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիայի ուղղությամբ դեռևս նախապատրաստական աշխատանքներ էին տարվում։

Սովետական Հայաստանի գյուղատնտեսության վերականգնման և հետագայում այն սոցիալիստական ուղու վրա փոխադրելու գործում կարևոր նշանակություն ուներ Հողաշինարարությունը։ Հողաշինարարության աշխատանքները Հայաստանում ծավալվեցին 1922 թ. և ոչ լրիվ կերպով ավարտվեցին 1925 թվականի վերջերին։ Կոմերիտականները այս հարցում ևս մեծապես ա-

15 «Բանվոր», № 192, 19 ապրիլի 1924 թ.։
16 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 494։

ջակցեցին կուսակցությանը, պայքարելով հողը հավասար, ըստ շնչի բաշխելու համար։ Նրանք հողաշինարարական հանձնաժողովների անդամներ էին։

Հիմք ունենալով Վ. Ի. Լենինի ցուցումները կոոպերացիայի մասին, կուսակցության XIII համագումարը (1924 թ. մայիս) առաջադրեց գյուղը կոոպերացնելու լոզունգը։ Համագումարը միաժամանակ որոշեց ընդլայնել աշխատավոր գյուղացիությանը տրվող էժան վարկի միջոցները՝ այդ ասպարեզից վաշխառուներին դուրս մղելու և գյուղատնտեսական արտադրական կոոպերացիային զարկ տալու համար։ Համագումարը պարտավորեցրեց կուսակցությանը, հասարակական կազմակերպություններին և կոմերիտմիությանը ամբողջ ուժով օժանդակել գյուղատնտեսական կոոպերացիային։

Առաջնորդվելով կուսակցության որոշումներով, Հայաստանի կառավարությունը 1924 թ. առաջին լուրջ ձեռնարկումները կատարեց գյուղատնտեսական արտադրական կոոպերացիա ստեղծելու ուղղությամբ։ 1924 թ. օգոստոսի 30-ին ՀՍՍՀ Կենտգործկոմը և Ժողկոմսովետը դեկրետ հրապարակեցին կոոպերացիայի մասին, ուր սահմանված էին նաև նրա խնդիրները[17]։ Նույն թվականին ՀՍՍՀ Ժողկոմսովետի որոշմամբ կազմակերպվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների կենտրոնը (Գյուղկոոպկենտրոն), որը պետք է ղեկավարեր և ապահովեր կուսակցության ու կառավարության որոշումների իրականացումը գյուղատնտեսության կոոպերացման ուղղությամբ։

Շնորհիվ կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների, 1924 թ. ընթացքում հանրապետությունում զգալիորեն ընդարձակվեցին գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի պարզ ձևերը։ 1924 թ. հունվարին արդեն կային 13 գյուղատնտեսական ընկերություններ՝ 6 կաթնատնտեսական, 5 գյուղվարկային և 3 հողագործական, որոնք ընդգրկում էին ընդամենը 1384 տնտեսություն[18]։ Դա կազմում էր հանրապետության գյուղացիական տնտեսությունների ընդամենը 0,93 տոկոսը։ Իսկ 1924 թ. վերջերին հանրապետությունն ուներ 76 կոոպերատիվ ընկերություն, որոնցում ընդգրկված 9179 գյուղացիական տնտեսություններն արդեն կազմում էին ամբողջ աշխատավորական տնտեսությունների 6,1 տոկոսը[19]։

1924 թ. սեպտեմբերին Հայաստանի կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ Երևանում հրավիրվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների համագումար, որը Գյուղկոոպկենտրոնի փոխարեն կազմակերպեց հանրապետության կոոպերատիվների միություն՝ Հայգյուղկոոպ և ընտրեց նրա վարչությունը։

Վերականգնման տարիների վերջերին գյուղատնտեսական կոոպերացիայի միավորների թիվը 1924 թ. համեմատությամբ կրկնապատկվել էր, հասնելով 147-ի, ընդգրկելով գյուղացիական տնտեսությունների 14,4 տոկոսը[20]։ Գյուղատնտեսական կոոպերացիան այսպիսով, դարձել էր հեղինակավոր և ուժեղ կազմակերպություն։ Շնորհիվ կուսակցության հոգատարության, աստիճանաբար աճում ու ամրապնդվում էին կոոպերացիայի պարզ ձևերը՝ ուղի հարթելով կոոպերացիայի ավելի բարձր ձևերի անցնելու համար։

---

17 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1924, № 24, հոդ. 43։

18 «Սովետական Հայաստանը 1920—1925 թթ.» ժողովածու, 1926, էջ 269։

19 Նույն տեղում, էջ 270։

20 Նույն տեղում։

Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և ծավալման գործում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը խոշոր գեր հատկացրին կոմերիտմիությանը։ Կուսակցական համագումարների, կոնֆերանսների, Կենտկոմի որոշումներում և այլ փաստաթղթերում կարմիր թելի պես սկզբից մինչև վերջ անցնում է այն միտքը, որ կոմերիտական կազմակերպություններն ամենուրեք պետք է օգնեն կուսակցական կազմակերպություններին և գյուղսովետներին կազմակերպելու գյուղական շքավորությանը։

ՀԿԿ III համագումարը (1924 թ. մայիս) գյուղում կատարվող կուսակցական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով որոշեց հատուկ ուշադրություն դարձնել գյուղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ղեկավարմանը, ճշգրտորեն պարզել նրանց ֆունկցիաներն ու խնդիրները։ Իսկ այն գյուղերում, ուր չկան այդպիսիք, աշխատանքի ողջ ծանրությունը իրենց վրա պետք է վերցնեին կոմերիտական կազմակերպությունները։

Կոոպերացիային և նրա զարգացման գործում կոմերիտմիության անելիքներին իր աշխատանքներում զգալի տեղ հատկացրեց նաև Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների III համագումարը (1924 թ. մայիսի 13—15, Թիֆլիս)։

Հանրապետության կոմերիտմիության մասնակցությունը գյուղատնտեսական արտադրական կոոպերացիային ապահովելու հարցին բազմիցս անդրադարձան նաև կուսակցության ու կառավարության ղեկավար շատ գործիչներ։ Այսպես, օրինակ, 1924 թ. մայիս ամսին ՀԼԿԵՄ Կենտկոմի պլենումում հանդես եկավ ՀՍԽՀ ԺողկոմխորՀի նախագահ Ս. Լուկաշինը։ Նա նշեց, որ Հայաստանի նման գյուղատնտեսական երկրում հիմնական նպատակը տնտեսությունը կոլեկտիվ հիմունքներով կազմակերպելն է։ Իսկ այդ գործում մեծ է կոմերիտականների դերը՝ նրանք պետք է լինեն կազմակերպիչ ուժ[21]։

Տնտեսական շինարարությանը կոմերիտմիության մասնակցության հարցը առանձնահատուկ կերպով քննարկվեց ՀԼԿԵՄ Կենտկոմի 1924 թ. մայիսյան պլենումում։ Պլենումն ընդունեց հատուկ բանաձև «Հայաստանի տնտեսական շինարարությունը և ԿԵՄ դերը»։ Բանաձևում ասված էր. «...Ակտիվ մասնակցություն ցույց տալով Հայաստանի ընդհանուր կոոպերացիայի, գյուղատնտեսության, նոր գյուղի և այլ շինարար աշխատանքներին,

1. ԿԵՄ գյուղական բջիջներին պիտի մասնակից դարձնել գյուղական կոոպերացիայի կազմակերպմանն ու շինարարությանը, նրանք պիտի հաճախ կոոպերացիայի կազմակերպման հաջողությունն իրենց վրա վերցնեն, որտեղ չկան կոմբջիջներ։

2. ...ա) Կոմերիտմիությունը որպես ամենամասսայական, ամենաբազմամարդ գյուղական կազմակերպություն, կոոպերացիայի գաղափարների գյուղի լայն խավերի մեջ տարածելու ասպարեզում հսկայական գործ ունի կատարելու։

3. ...բ) գյուղական բջիջների աշխատանքների միջոցով կարմիր թելի պես պիտի անցնի Խորհրդային Միության աշխատավոր մասսաների լենինյան ուղիներով կոոպերացման միջոցով դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը...»[22]։

Հայաստանի կոմերիտական կազմակերպությունները ջերմորեն արձագանքեցին կուսակցության, կառավարության և կոմերիտական ղեկավար մարմին-

---

21 ՄԼԻ-ի ՀՊԱ, ֆ. 48, պ/մ 110։

22 «Խորհրդային Հայաստան», № 115, 21 մայիսի 1924 թ.։

ների որոշումներին։ Ամենուրեք կոմերիտականների նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ հանրապետությունում կազմակերպվեցին մեքենական ընկերություններ, հողը համատեղ մշակելու արտելներ, կոոպերատիվներ և այլն։ Բերենք մի քանի օրինակներ։

Երևանի շրջանի Բուրաստան գյուղի կոմերիտական բջիջի բոլոր անդամները 1923 թ. օգոստոսին կազմակերպեցին կոոպերատիվ[23]։ Կոոպերատիվներ կազմակերպվեցին Արտաշատում, Այգաբացում, Բարձրաշենում, Սիսիանի շրջանի Մաղարա գյուղում և այլն[24]։

ՀՍՍՀ սովետների IV համագումարը (1925 թ. մարտ) ամփոփեց հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի ձեռք բերած հաջողությունները և նոր խնդիրներ դրեց նրա առաջ։ Համագումարը որոշեց ամեն կերպ ընդարձակել կոոպերացիաների ցանցը գյուղում, աստիճանաբար արմատավորել արտադրության հանրային կազմակերպումը, հողի անհատական մշակումից նրա հանրային մշակման բարձ ձևերին անցնելու համար։

Շնորհիվ կուսակցության և կառավարության հոգատարության գյուղատնտեսական արտադրական պարզ ձևերը և վարկային ընկերությունները 1925—26 թթ. զգալի դեր խաղացին հանրապետության գյուղատնտեսական կյանքում։ Աճել էր նրանց թիվը։ 1925 թ. 147-ի դիմաց 1926 թ. հասել էր 205-ի, որոնք ընդգրկում էին 30075 գյուղացիական տնտեսություն[25]։

Կոոպերացիայի բնագավառում ձեռք բերած հաջողությունները ամփոփեց Հայաստանի կոմունիստական կուսակցության IV համագումարը[26]։

Անդրկովկասում կոոպերատիվ շինարարության աշխատանքներին անդրադարձավ նաև Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների IV համագումարը, որը խնդիր դրեց հետագայում այն էլ ավելի ընդլայնել և ամրապնդել։ Երկրային համագումարը ևս զգալի դեր հատկացրեց կոմերիտմիությանը կոոպերացիայի ծավալման գործում։

Գյուղատնտեսության վերականգնման համար հսկայական նշանակություն ուներ գիտության նվաճումների պրոպագանդան և դրա հետ մեկտեղ աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրումը գյուղատնտեսության զանազան ճյուղերում։ Այս ասպարեզում ևս մեծ տեղ էր հատկացված կոմերիտմիությանը։ Կոմերիտականների նախաձեռնությամբ ստեղծվեցին գյուղատնտեսական խմբակներ, որոնց թիվը 1925 թվականին հասնում էր 123-ի, իսկ ամբողջ ՍՍՀՄ-ում 5000-ի[27]։ Գյուղատնտեսական խմբակները զգալի ներդրում կատարեցին գյուղատնտեսության վերելքի գործում և երիտասարդությանը մասնագիտական գյուղատնտեսական կրթություն տալու բնագավառում։ Շատ չանցած բազմաթիվ գյուղատնտեսական խմբակներ վերածեցին դպրոցների և նրանց ցանցն աճեց։

1924 թ. գարնանից մինչև 1925 թ. աշունը Հայաստանում բացվեցին 14 գյուղերիտ դպրոցներ[28]։ Մինչ այդ ՀԼԿԵՄ III համագումարից անմիջապես հետո բացվել էին նաև 8 գյուղերիտ դպրոցներ, չնայած նախատեսված էր

23 «Երիտասարդ մանկալ», № 8, 9 օգոստոսի 1923 թ.։
24 «Բանվոր», № 222 և 237, 1924 թ., «Ավանգարդ», № 52 (141), 29 հոկտեմբերի 1925 թ.։
25 «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925, 1925—1926 թթ.», էջ 19։
26 ՄԼԻ-ի ՀՊԱ, ֆ. 1, գ. 1, թ. 326, 1925 թ.։
27 Նույն տեղում, ֆ. 48, պ/մ 110, թ. 13։
28 Նույն տեղում, ֆ. 48, պ/մ 467, թթ. 2—22։

16-ը[29]։ Գյուղերիտ դպրոցներ կային նաև քաղաքներում։ 1925 թ. գյուղերիտ դպրոցներում սովորում էին 671 աշակերտ[30]։

Գյուղում աշխատանքն ուժեղացնելու, չքավոր և միջակ գյուղացիության ակտիվությունը բարձրացնելու, գյուղի և քաղաքի դոդումն էլ ավելի ամրապնդելու նպատակով ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում կոմունիստական կուսակցությունը մշակեց և իրականացրեց տնտեսական, վարչա-քաղաքական, կուլտուր-լուսավորական մի շարք միջոցառումներ։

Վերացվեցին ռազմական կոմունիզմի քաղաքականության մնացորդները, ճիշտ փոխհարաբերություն սահմանվեց արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների միջև, գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարն իջեցվեց։ Քաղաքում և գյուղում էլ ավելի ծավալվեց սովետական դեմոկրատիան, աշխուժացան սովետների աշխատանքները, պայքար մղվեց բյուրոկրատիզմի դեմ, հնարավոր չափով էժանացվեց պետական ապարատը։ Ընդլայնվեց պետության կողմից գյուղացիությանը տրվող վարկը, զգալի աշխատանքներ կատարվեցին գյուղում անկուսակցական ակտիվի կադրեր ստեղծելու ուղղությամբ։

Կենտգործկոմը այդ միջոցառումներն ապահովելու և գյուղում տարվող աշխատանքներում կուսակցական ղեկավարությունն ամրապնդելու նպատակով ՌԿ(բ)Կ 14-րդ կոնֆերանսը (1925 թ. ապրիլ) որոշեց ՍՍՀ Միության մասշտաբով քաղաքից գյուղ աշխատանքի ուղարկել 3000 պրոպագանդիստ, 1000 կուսակցական ղեկավար աշխատող և 2000 կոմերիտական աշխատող։

Կուսակցության այս որոշումը լայն արձագանք գտավ Հայաստանի կոմերիտական կազմակերպություններում։ Ամենուրեք բանվորական կոմերիտական բջիջների ժողովներում որոշումներ ընդունվեցին առավել ձեռներեց և պատրաստված կոմերիտականներին գյուղ գործուղելու մասին։ Երևանը, Լենինականը, Ալավերդին, Ղարաքիլիսան և Ղափանը բազմաթիվ կոմերիտականների ուղարկեցին գյուղ։ Բերենք թեկուզ մի օրինակ։ Երևանի կուսակցական և կոմերիտական բջիջների միացյալ խորհրդակցությունում որոշվեց 25 հոգու ուղարկել գյուղ։ Գնացողների 10 տոկոսը ԼԿԵՄ Երևանի կոմիտեի անդամներ էին, 10 տոկոսը՝ պիոներական աշխատողներ[31]։

Հայաստանի կոմերիտական կազմակերպություններն իրենց աշխատանքներում զգալի տեղ հատկացրին շեֆական աշխատանքներին։ Կոմերիտմիության համահայկական III համագումարն իր որոշումներում շեշտեց դրանց ծավալման անհրաժեշտությունը և նշեց շեֆական աշխատանքի կոնկրետ ձևերը։

Շեֆական աշխատանքը բազմաբնույթ էր։ Այն լավագույն ձևով կատարելու համար կոմերիտական բջիջներում ստեղծվում էին շեֆական հանձնաժողովներ, որոնք ղեկավարում էին այդ աշխատանքները։ Շեֆերը գյուղում կարդում էին դասախոսություններ, պայքարում էին նոր կենցաղի համար և հաճախ էլ գրենական պիտույքներ ու գրականություն էին տալիս ենթաշեֆ կոմերիտական բջիջներին։ Օրինակ, Երևանի կաշեգործարանի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները միացյալ կերպով տանում էին Հրազդանի շրջանի Այգեստան գյուղի շեֆությունը։ Շնորհիվ նրանց լավ աշխատանքի,

29 «Ավանգարդ», № 14 (173), 1926 թ.։

30 «Խորհրդային Հայաստան», № 136, 1925 թ.։

31 «Խորհրդային Հայաստան», № 236 (1290), 17 հոկտեմբերի 1925 թ.։

գյուղացիները եռանդուն կերպով տնտեսական և կուլտուր-լուսավորական աշխատանքներ էին կատարում, ստեղծել էին թատերական սեկցիա[32], եվ որ կարևորն է, շնորհիվ կաշեգործների, երեք կոմերիտականներ ընդունվեցին բանֆակ, իսկ չորս հոգի՝ քաղլուսվարի բարձր տիպի դպրոց[33]։

Քաղլուսվարի դպրոցին կից կոմերիտական բջիջը ստանձնելով Ջաֆարաբաղ գյուղի շեֆությունը, տեղի ԼԿԵՄ բջիջի հետ միասին գյուղում բացեց խրճիթ-ընթերցարան, ապահովեց այն գրականությամբ ու թերթերով[34]։

Այսպես էին աշխատում կոմերիտական բջիջները ամենուրեք։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերված նշանակալից հաջողությունների շնորհիվ ամրապնդվեցին Սովետական Միության միջազգային դիրքերը, աճեց նրա հեղինակությունը։ Կապիտալիստական շատ երկրներ դիվանագիտական և առևտրական կապեր հաստատեցին մեր երկրի հետ։

Սովետական Միության և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Անդրկովկասյան Ֆեդերացիայի հաջողություններին զուգընթաց, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում՝ 1925 թվականին նշանակալի նվաճումների հասավ Հայկական հանրապետությունը։

1925 թ. հանրապետությունում ընդհանուր ցանքատարածությունները կազմեցին 295,7 հազար հեկտար 1913 թ. 345,7 հազար հեկտարի և 1919 թ. 82,7 հազար հեկտարի դիմաց[35]։ Այսինքն համարյա թե մոտեցան 1913 թ. մակարդակին։ 295,7 հազար հեկտար ընդհանուր ցանքատարածություններից 255,2 հազար հեկտարը հացահատիկային ցանքեր էին, 22,8 հազար հեկտարը՝ տեխնիկական կուլտուրաներ, 17,6 հազար հեկտարը՝ կարտոֆիլ և բանջարանոցային կուլտուրաներ[36]։

Զգալի վերելք ապրեց նաև անասնապահությունը, բարձրացավ անասունների մթերատվությունը։

Այսպիսով, գյուղատնտեսության վերականգնման շրջանում հանրապետության աշխատավորների հաջողությունների գործում իր մեծ դերն է կատարել Հայաստանի կոմերիտմիությունը։

---

32 «Ավանգարդ», № 41, 24 սեպտեմբերի 1924 թ.։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, № 2 (93), 15 հունվարի 1925 թ.։

35 «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», Ереван, 1928, стр. 27; «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)», Ереван, 1940, стр. 64.

36 Նույն տեղում, էջ 27։